600.0040.10.02.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2021 թվականի №40Ա
ք. Երևան

«ՊՐՈՄ ՍԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0629 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի նոյեմբերի 30-ի №439Ա որոշմամբ «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված և Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 18-ի №411Ա որոշմամբ «ՊՐՈՄ ՍԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ վերաձևակերպված՝ «Պրոմ Սինթեզ» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0629 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0629 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), ինչը, սակայն, չի կատարվել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2020 թվականի հունիսի 1-ը,

բ) Ընկերությունը 2020 թվականի հունիսի 1-ի №18 և հունիսի 11-ի №20 գրություններով Հանձնաժողով է ներկայացրել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննության չանցած նախագծային փաստաթղթեր, ինչը փաստվել է Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 9-ի №308Ա որոշմամբ և, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, Նախագծի՝ Հանձնաժողով ներկայացման ժամկետը համարվել է երկրորդ անգամ երկարաձգված մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը, մինչդեռ Ընկերությունը նշված ժամկետում ևս չի ներկայացրել այն,

գ) Ընկերությունը 2020 թվականի հոկտեմբերի 13-ին վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողով՝ խնդրելով անվավեր ճանաչել Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 9-ի №308Ա որոշումը, որը Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի №489Ա որոշմամբ մերժվել է,

դ) Հանձնաժողովը 2021 թվականի հունվարի 25-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ԼԷ №0629 լիցենզիայի գործողությունը կասեցնելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2021 թվականի հունվարի 25-ի №ԳԲ/34.3-Մ2-12/175-2021 գրությամբ,

ե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի առնչությամբ 2021 թվականի հունվարի 29-ի գրությամբ հայտնել է, որ նախաձեռնել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության իրականացման գործընթաց, համալիր փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը նախապատրաստման փուլում են, և, միևնույն ժամանակ, խնդրել է երկարաձգել համապատասխան փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ հաշվի առնելով փորձաքննության ստացման գործընթացի ժամանակատարությունը,

զ) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ

ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում արտադրության լիցենզիայի գործողությունը կասեցվում է,

է) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0629 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԼԷ №0629 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը, Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու հիմքով կասեցնել Ընկերության ԼԷ №0629 լիցենզիայի գործողությունը՝ մինչև կասեցման պատճառի վերացումը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից 15 օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
10 փետրվարի 2021թ.